

ՎԵՀԱՓԱՌ ՎԱՉԳԷՆ Ա ՀԱՅՐԱՊԵՏԻ ՆՈՐ ՏԱՐՈՒԱՅ ՊԱՏԳԱՄԸ ԵՐԵՒԱՆԻ ՀԵՌՈՒՍՏԱՑՈՅՑԻՑ (1 Յունուար 1991 թ.)

**«Քաջալերեցարուք և զօրացին սիրտք ձեր ամենեքեան.
ոյք յուսացեալ էք ի Տէր».
Քաջալերուեցէք, և թող ձեր բոլորի սրտերը զօրանան,
քանի որ դուք յոյս ունէք ի Տէր:
Սիրեցեալ ժողովուրդ Մեր,
Աստուծոյ նախախնամութեամբ հոսում է ժամանակը անսկիզբ ու անվախճան, խաղաղ ու անվրդով:**

Սուրբ Էջմիածնի Մայր Տաճարի զանգերը հնչեցին այսօր, աւետելով լուսաբացը մի Նոր Տարուայ, որը մենք հաշուում ենք Յիսուսի ծննդից, մինչև 1991 թուականը:

Թէև մեր հայրենի երկրի մարմինը զարկուած է՝ 1988 թուի երկրաշարժի ահեղ հարուածից, ու թէև մեր սրտերը խոցուած են Արցախի ցաւով, սակայն մեր ազգի զաւակները բոլորը, ի Հայաստան և ի սփիւռս աշխարհի, մնում են իրենց գոյապայքարի ուխտի վրայ անշարժ ու անսասան, ինչպէս մեր նախնիները, անցնող հազարամեակներին, շարունակ:

Ապրելու և գոյատևելու մեր ազգային ուխտը՝ նուիրագործուել ու պայծառակերպուել է առաքելական մեր Մայր Եկեղեցու աղօթքներով և լոյս ճառագայթումներով սերնդից սերունդ, անմար հաւատով առ Աստուած ու տեսիլքովը յաւիտենականութեան խորհրդի:

Այո, հայը հաւատում է Աստծուն, որովհետև որոշել է չմահանալ, այլ ապրել ամէն գնով, ապրել ու արարել բոլոր պայմաններում:

Մեր ազգը իր հոգու խորքում պահում է անիմանալի գաղտնիքը լինելիութեան, նոյնիսկ իր մարմնի մահուան գնով: Միայն թէ հոգին մնա կենդանի ու անաղարտ: Որովհետև՝ նա հաւատում է Յիսուսին, թէ՝ «Հոգին է կենդանարար»:

Արդ, հարազատներ Մեր, եկէք այս հաւատով բացենք դռները Նոր Տարուայ և առաջ ընթանանք ապրելու ազնիւ կրքով ու շինարար ոգով, մեր կեանքի և աշխատանքի ճանապարհը լուսաւորելով՝ նորաստեղծ մեր պետութեան օգոստոսեան հռչակագրի լոյսով, մէկ սիրտ, մէկ հոգի, իբրև հարազատ եղբայրներ, կեանքի կոչելու համար մեր վերածնուած ժողովրդի ար-

դար երազանքները, ներուժ ձգտումով ինքն իրեն վերակերտելու՝ նոր ձևերի մէջ, նոր տեսիլքներով, նոր թռիչքով:

Աշխարհի պատմութիւնը վկայում է, թէ նպատակի մէկութիւնն է որ ծնունդ է տալիս ազգի հոգեկան կեանքի կազմաւորմանն ու ամրապնդմանը:

Ազատ ու ինքնիշխան ապրելու նպատակի շուրջ՝ համազգային համախմբում, համերաշխ ու միակամ ու կարգապահ—ահա երաշխիքները մեր մայր երկրի անվտանգ պահպանման և ապագա բարօրութեան:

Հայեր, մայր հայրենիքից ու բոլոր երկրներից, միացէք ու հաւատացէք ձեր վերածննդին, հաւատացէք ձեր հաւաքական ուժին ու ձեր առաւել պայծառ ապագային:

Մի տկարացէք, մի շփոթուէք, մի յուսալքուէք:

Մի վախեցէք անցողիկ դժուարութիւններից ու նեղութիւններից:

Մի վախեցէք պատասխանատուութիւն ստանձնելուց, ձեր պարտքը անաչառ կատարելուց:

Եւ մի վախեցէք ազատ ապրելուց: Յիշեցէք պատգամը Քրիստոսի մեծ առաքեալի՝ «Եղբայրներ, դուք կոչուած էք ազատութեան», հետևաբար՝ քաջալերուեցէք և զօրացրէք ձեր սրտերը, քանի որ դուք յոյս ունէք ի Տէր»:

Եւ դիմաւորեցէք Նոր Տարին առաւել հաւատով, առաւել ինքնավստահ, առաւել լաւատէս, առաւել հայրենաշէն եռանդով, առաւել գոտեպինդ աշխատանքով:

Տէր Աստուած հարցն մերոց, Նոր Տարով բաց մեզ դռները քո անբաւ ողորմութեան և տուր աշխարհիս խաղաղութիւն, ազգիս հայոց՝ սէր, միութիւն: Ամէն: